



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/2032-2026

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1222-17.12.2025-S<-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 51 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քաջախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1222-
17.12.2025-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ ստորև ներկայացնում է իր դիտարկումներն ու առաջարկությունները:

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է լրացում կատարել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 55-րդ հոդվածի 4-րդ մասում և սահմանել, որ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է նաև յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ-ն:

Այս առումով, հայտնում ենք, որ օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված են հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում ներառվող տվյալները, իսկ առաջարկվող կարգավորումը վերաբերում է ՀԴՄ կտրոնում լրացվող տեղեկատվությանը: Ուստի, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող լրացումը հանել:

Միաժամանակ, եթե նախատեսվում է, որ հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պետք է լրացվեն առաջարկվող տվյալները (մասնավորապես, յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը), ապա առաջարկում ենք նշյալ կետը խմբագրել:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետով օրենսգրքի 380.1-ին հոդվածի 1-ին մասում կատարվող լրացման արդյունքում ստացվում է, որ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասով կարող է կիրառվել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա, մինչդեռ նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվող լրացմամբ սահմանվում է, որ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է:

Արդյունքում ստացվում է, որ մի կողմից բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունները կարող են կիրառել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա, իսկ մյուս կողմից դրա կիրառությունը պարտադիր է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող լրացման անհրաժեշտությունը բացակայում է:

3. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվում է սահմանել, որ

Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից՝ եթե վճարումն իրականացվել է վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով, իսկ վճարային քարտերի միջոցով վճարման դեպքում պարտադիր է նաև ոչ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը:

Օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է, մասնավորապես՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս:

Այս առումով, հայտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք առաջարկվող լրացման մեջ կիրառվող «վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքները» նույնն են, ինչ օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ «վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ»-ը, թե խոսքն այլ գործիքների մասին է, որոնց դեպքում ոչ էլեկտրոնային ՀԴՄ-ի կիրառության պարտադիր պահանջ սահմանված չէ (օրինակ՝ վճարային տերմինալները):

Միաժամանակ, վճարային քարտերի միջոցով վճարման դեպքում նաև էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր սահմանելու առաջարկի վերաբերյալ հայտնում ենք, որ նշված պահանջի սահմանումը խնդրահարույց է օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վճարային քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում ոչ էլեկտրոնային ՀԴՄ-ի պարտադիր կիրառության մասով: Ստացվում է այնպես, որ տնտեսավարող սուբյեկտների համար նույն գործարքի դեպքում պարտադիր է լինելու ինչպես ոչ էլեկտրոնային, այնպես էլ էլեկտրոնային ՀԴՄ-ի կիրառությունը:

Ուստի, առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող լրացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.2. Էլեկտրոնային առողջապահության համակարգին միացած բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով վճարումն ընդունելու դեպքում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է:»:

4. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել, որ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է նաև յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ-ն:

Այս առումով, հայտնում ենք, որ բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը բավական է ծառայություն ստացող քաղաքացուն նույնականացնելու համար, և ՀԾՀ նշելու անհրաժեշտությունը բացակայում է: Ուստի,

առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածով Հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվող 20-րդ կետից հանել «և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ» բառերը:

5. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը «380.1» թվից առաջ անհրաժեշտ է լրացնել «Օրենսգրքի» բառով, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող նոր 1.2-րդ մասը «իսկ» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «,» կետադրական նշանով:

6. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «Օրենքի» բառն անհրաժեշտ է փոխարինել «Օրենսգրքի» բառով:

7. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես՝ անհրաժեշտ է նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայել:

Այս առումով, առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «2026 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը» բառերով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնում է, որ նախագիծը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի ընդունմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանալու համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման մեջ՝ օրենքի ընդունումից հետո եռամսյա ժամկետում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 51 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պետական նկատմունքների կոմիտեի նախագահի տեղակալ Համլետ Սահակյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Դ-1222-17.12.2025-SՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

22.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄՔ

Պ-1222-17.12.2025-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 55-րդ հոդվածի 4-րդ մասում 11-րդ կետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ լրացնել 12-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«12) բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը եւ ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ:»:

Հոդված 2. 380.1-ին հոդվածում կատարել հետեւյալ լրացումները.

1) 1-ին մասում «գործարքների» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների մատուցման» բառերը.

2) 1.1-ին մասից հետո լրացնել 1.2-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.2. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է բժշկական օգնության եւ սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից՝ եթե վճարումն իրականացվել է վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով իսկ վճարային քարտերի միջոցով վճարման դեպքում պարտադիր է նաեւ ոչ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը:»:

3) 2-րդ մասում «իրականացման գործարքների» բառերից հետո լրացնել «, եւ 1.2-րդ մասում նշված՝ բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների մատուցման» բառերը:

Հոդված 3. Օրենքի 381-րդ հոդվածի 3-րդ մասում 19-րդ կետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ լրացնել 20-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«20) բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը եւ ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները եւ լրացումներն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումն ուղղված է բժշկական օգնության եւ սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի եւ քաղաքացիների փոխահարաբերությունների կարգավորմանը, մասնավորապես՝ վճարահաշվարկային տերմինալների միջոցով բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների համար կատարված վճարումների դիմաց քաղաքացիներին տրվող հսկիչ դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) կտրոնների տրամադրման դյուրինացմանը:

Միաժամանակ նախագծի ընդունումը կնպաստի բժշկական հաստատությունների կողմից պետպատվերի եւ սոցիալական փաթեթի շրջանակներից դուրս մատուցված բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության բարձրացմանը, առողջապահական տվյալների ամբողջականության ապահովմանը:

2. Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները

Համաձայն Հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի՝ կազմակերպությունների կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է բնակչությանը ծառայություններ մատուցելիս: Հիմք ընդունելով հարկային օրենսգրքի այս հոդվածը՝ բժշկական կազմակերպությունները ծառայություններ տրամադրելիս պարտադիր պետք է տրամադրեն ՀԴՄ կտրոն: Գործնականում, երբ վճարումը իրականացվում է վճարային քարտերի միջոցով, ՀԴՄ-ՊՈՍ համակցված տերմինալների միջոցով քաղաքացուն տեղում տրամադրվում է հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը, իսկ վճարային տերմինալների միջոցով վճարում իրականացնելիս սարքավորումը տրամադրում է միայն ԿԲ խորհրդի 14.10.2016թ. թիվ 168-Ն որոշմամբ սահմանված «Վճարման հանձնարարական» փաստաթուղթը: Այդ դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն ստանալու համար քաղաքացին պետք է մոտենա բժշկական հաստատության հաշվապահության: Նման գործընթացը բարդություն է ստեղծում քաղաքացիների համար, բժշկական հաստատություններում առաջանում են

կազմակերպչական խնդիրներ եւ հետագայում դրանք հաշվապահորեն ձեւակերպելու դժվարություններ:

Միաժամանակ, ներկայումս բժշկական հաստատությունների կողմից պետպատվերի եւ սոցիալական փաթեթի շրջանակներից դուրս մատուցված բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների վերաբերյալ տվյալները շատ հաճախ չեն մուտքագրվում էլեկտրոնային առողջապահական համակարգ, չնայած «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասին, որի համաձայն՝ լիցենզավորված անձը էլեկտրոնային առողջապահության համակարգում պետք է ապահովի տվյալների թարմացումը, պացիենտների այցելությունների, մատուցվող ծառայությունների, բժշկական միջամտությունների, ախտորոշումների, նշանակումների, անձի առողջության եւ նույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական տվյալների մուտքագրումը դրանց փաստացի կատարման պահին: Ավելին՝ ՀՀ կառավարության 29 հունիսի 2002 թվականի N867 որոշմամբ հաստատված են դեղատնային գործունեության իրականացման, ինչպես նաեւ բժշկական օգնության եւ սպասարկման իրականացման լիցենզավորման կարգերը, որոնք եւս սահմանում են էլեկտրոնային առողջապահական համակարգին միանալու եւ սահմանված տվյալների մուտքագրման պահանջ:

Մատուցված բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների մասին տեղեկության բացակայությունը հնարավոր է լինում պարզել միայն այն դեպքում, երբ տվյալ լիցենզավորված անձը ներառված է լինում առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի կողմից կազմված տարեկան ստուգումների պլանում:

3. Կարգավորման նպատակը եւ բնույթը

Օրենքի նախագծով նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքի 380.1 հոդվածում կատարել փոփոխություն լրացումներ, որոնց համաձայն՝ բժշկական օգնության եւ սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերի համարա պարտադիր կլինի կիրառել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա, իսկ եթե վճարումը իրականացվել է վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով (վճարային տերմինալ) կամ վճարային քարտերի, ապա այս դեպքերում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա ունենալը կդառնա պարտադիր, եւ ծառայությունների մատուցման դիմաց կատարված վճարման դիմաց կգեներացվի էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն, որը քաղաքացին կարող է ստանալ էլեկտրոնային առողջապահական համակարգի հավելվածի միջոցով:

Միաժամանակ, նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ եւ 381-րդ հոդվածներում կատարել լրացումներ, որոնց համաձայն՝ բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում, համապատասխանաբար, հարկային հաշվի եւ ՀԴՄ կտրոնի վրա պետք է տպագրվի նաեւ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ տվյալ ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը եւ ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ, ինչը կապահովի մատուցված ծառայությունների մասին տվյալների պարտադիր մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ:

Օրենքի ընդունման դեպքում անհրաժեշտություն է առաջանալու կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման 7-րդ հավելվածում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը եւ պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունները

Օրենքի նախագծի ընդունումը չի պահանջում լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային եւ/կամ այլ ռազմավարություններ:

Որոշման նախագիծը կապված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.5 Առողջապահություն» բաժնի 8-րդ կետի պահանջների ապահովման հետ, մասնավորապես՝ Կառավարության հիմնական նպատակներից շարունակում է մնալ էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգի ամբողջական ներդրումը, որի շնորհիվ քաղաքացիներին էլեկտրոնային հարթակում հասանելի կլինեն իրենց բժշկական տվյալները: Ձեւավորված առողջության պատմության, այդ թվում՝ բժշկական հետազոտությունների էլեկտրոնային տվյալները հնարավոր կլինի օգտագործել տարբեր բժշկական հաստատություններ հաճախելիս: Այդպիսով կբարձրանա բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների որակը եւ արդյունավետությունը, որը կնպաստի կրկնակի հետազոտությունների եւ բուժումների նվազմանը եւ հետեւաբար դրանց համար կատարվող ծախսերի կրճատմանը թե՛ պետության, թե՛ քաղաքացիների համար: Կապահովվեն նաեւ առողջական տվյալների ամբողջական հավաքումը եւ դրանց հիման վրա վերլուծությունների իրականացումը, որն էլ իր հերթին կհանգեցնեն ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ եւ թափանցիկ բաշխմանը: